ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

09.02.2024 17:18

Հարգելի՛ գործընկերներ,

«Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) համաձայն՝ Փաստաբանների պալատը վարում է կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրած (ծրագրեր իրականացրած) փաստաբանների և փաստաբանական գործունեություն իրականացնող կազմակերպությունների ցուցակը:

Նշված ցուցակում կարող են ընդգրկվել այն փաստաբանները և կազմակերպությունները, որոնք հաշվետու տարվա, տվյալ դեպքում՝ 2023 թվականի ընթացքում Փաստաբանների պալատի խորհրդի որոշմամբ սահմանված ժամաքանակով և այլ չափանիշներին համապատասխան կամավոր անհատույց իրավաբանական օգնություն են տրամադրել Օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված խմբերի անձանց:

Ցուցակում ընդգրկված փաստաբանների և փաստաբանական գործունեություն իրականացնող կազմակերպությունների նկատմամբ կիրառվում են խրախուսանքի միջոցներ: Մասնավորապես, վերջիններիս տվյալները հրապարակվում են Փաստաբանների պալատի և ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքերում, իսկ **փաստաբաններն ազատվում են վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունից**:

Ցուցակում ընդգրկվելու համար փաստաբանը կամ համապատասխան կազմակերպությունը կարող է **մինչև սույն թվականի մարտի 1-ը** info@advocates.am էլ. փոստի հասցեին ուղարկել 2023 թվականի ընթացքում իր կողմից կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրելու դեպքերի (տրամադրված գործերի) վերաբերյալ հաշվետվություն:

Կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրման խրախուսելի նվազագույն չափանիշները (չափը), հաշվետվության ներկայացման կարգը և ձևը սահմանված են Փաստաբանների պալատի նախագահի 13.01.2023թ. թիվ 2/11-Լ որոշմամբ, որը հասանելի է հետևյալ հղումով՝ https://advocates.am//images/khorhrdi_voroshumner/HPG-2-11-anvchar.pdf:

Հարցերի դեպքում կարող եք կապ հաստատել ՀՀ

փաստաբանների պալատի ընդունարան՝ 010-60--714 (ներք. 111) հեռախոսահամարով (Աննա Մխոյան):

Հաշվետվության ձևի էլեկտրոնային ձևանմուշը ստորև՝

ԲԵՌՆԵԼ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })